

ԱՊԵՏԻՔ ԿՈՄԱՐ

ԶԱՐԾԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե'ս թագմ. 1953. թ. 11-12, էջ 225)

ԳԼՈՒԽ Է.

Վիեննայի մէջ — Լեոփոլտ Ա.ի քով

Անշուշտ Պետրոս Ապետիք Հռոմի մէջ անցուցած իր պատանեկութիւնը յիշած պիտի ըլլայ, երբ քաղաքին պարիսպներէն ներս մտնելով՝ նեղ եւ ոլորտաւոր լինող զոյններէ վերջ՝ մտաւ լայն ու զեղեցիկ Հիմմէլփորթկաստէ: Կաղնիի փայտով հաստ դռներ, զեղեցիկ պատշգամներ, դրօշադարձ պալատներ, փողոցին վրայ երթեւեկող լողնուական երեւոյթով մարդիկ՝ արդէն իսկ առաջին ակնարկէն Հապոսպուրկներու մայրաքաղաքին շուայութիւնը կը ցոյցնէին: Կառքը շուրջ ժամ մը վազելէ վերջ՝ կանգ առաւ հուսկ մեծ, յարկանի եւ կոկիկ տան մը առջեւ. «Monasterium Patrum Praedicatorum». այսինքն Վիեննայի Դոմինիկեան Հայրերու վանք էր, ուր Փիսքոփոս եւ Պետրոս Ապետիք իջեւան զտան:

Երկու դասպաններու բոլոր ջանքը եղաւ օր առաջ կարենալ կայսերական ունկընդրութեան արժանանալ. արդարեւ քիչ ատենէն բարձրաստիճան պալատականի մը ձեռքով հասաւ պաշտօնական հրաւերը:

Այս դէպքը 1677-ի ամառուան սկիզբը կը պատահէր: Վիեննայի արքունիքի աւանդական շուայութեամբ ընդունուեցան, նման Սպահանի ընդունելութեան, բայց արեւմտեան երեւոյթներու տակ: Լէոփոլտ նահապետական պարզութեամբ կ'ապրէր Հոֆպուրկի մէջ՝ երբ հիւրեր չունենար: Դարերու ընթացքին Հապոս-

պուրկներու զիղած զեղարուեստական դանձերը ամէնօրեայ դորձածութենէ հետոս էին. ասոնց մէջ կային այնպիսի կրտորներ ալ՝ որ Արեւ-Թաղաւորին նախնին իսկ կը շարժէին ու փափաքը կը զրդուէին ձեռք ձգելու դանոնք: Այս շրջանին կայսերական պալատին ներքին պաշտօնականներն ու զօրավարները աւելորդական ազնուորեալի ընտրանիներն էին՝ Բառնիւ, Թրաոնն, Մանսֆէլտ, Փար, Շլիք, Տիթրիխշթայն ու Սալմ: Հունգարացի ազնուականներն ալ ստէպ կու գային Պալատ, ու կ'երեւի թէ ասոնց հետ ունեցած յարաբերութիւնները շարժառիթ եղած ըլլան Ապետիքին դէպի Հունգարիա ուղղուելու: Այս եւ ասոր յաջորդող շրջաններուն՝ բազմաթիւ օտար իշխաններ, Թաղաւոր ընտրողներ, Լեհաստանի Թաղաւորը եւ նոյնիսկ Մեծն Պետրոս Ռուս Յարը ստէպ պալատին հիւրերը կ'ըլլային: Ու բնական է թէ այսպիսի պարապանքներուն սպանիական կարգաձեւն ու կայսերական շուայութիւնը իր բոլոր ճոխութեամբ կը յայտնուէր: Կրնանք ուրեմն երեւակայել թէ Ապետիքի եւ Փիսքոփոսի առջեւ բոլորովին նոր աշխարհ մըն էր որ քողաղերձ կ'ըլլար, երբ անցնելով Պուրկի ընդարձակ դռներէն, չքեղ պարտէզներու լայն խճուղիներէն՝ զիրենք կ'առաջնորդէին չքեղ բանուածքներով դարձաւորապէս լայն նախասրահ: Ինչպիսի՞ տարբերութիւն այս եւ այն միջնորդարին միջեւ, որուն իրենք այս վերջին տարիններուն վարժած էին: Պալատական ներքին պաշտօնեայի մը նշանին վրայ՝ դռները



ՊԵՏՐՈՍ ԱՊԵՏԻՔ

բացուեցան, եւ ասա հետոս աշխարհներէն եկող այդ պատգամաւորները ինքզինքնին դտան աշխարհիս հզօրազոյն միապետներէն մէկուն առջեւ:

Լէոփոլտ զլսու թեթեւ շարժումով մը պատասխանեց իրենց խորին խոնարհութեան. երկու պատգամաւորները յոտրնութեան. հարց մը՝ որ նոյն ժամանակ ո'չ միայն Վիեննայի, այլ նաեւ բոլոր աշխարհի քաղաքականութեան առանցքը կը կազմէր: Յանձնեցին նաեւ բոլոր այն ընդունելի, ու մանաւանդ թէ իրենց անցած զրկողին, ու մանաւանդ թէ իրենց անցած բոլոր երկիրներու Թաղաւորներու փափաքն է կազմել դաշնակցութիւն մը՝ որով վերջնականապէս վճռուէին թուրք-

րը Եւրոպայէն եւ Ասիոյ մէջ իրենց դրաւած հողամասերէն: Ու շնորհիւ թէ ներկայիս Շահը զիրենք Եւրոպա զրկած է, որպէսզի Գերման-Հռոմէական կայսրին եւ Պապին հետ հակաթուրք դաշնակցութեան մը մանրամասնութիւնները կարգադրեն. հարց մը՝ որ նոյն ժամանակ ո'չ միայն Վիեննայի, այլ նաեւ բոլոր աշխարհի քաղաքականութեան առանցքը կը կազմէր: Յանձնեցին նաեւ բոլոր այն ընդունելի, որոնց մասին Ապետիք համառօտակի այսչափ միայն կը զրէ. «Յանձնելով այն ամէն բան՝ որ մեզի յանձնուեցաւ Պարսիկ արքունիքէն»: Միապետը ապա իրենց ուղղեց քանի մը հարցումներ, ո-

րոնց մէջ իրենք չառ բարի տրամադրութիւններ բաց նաեւ որոշ վերադասութիւն մը նկատեցին, ճիշտ հակադասութիւն Արեւելի իշխաններու սրտազեղ ազնիւ վերաբերումին:

Ինչպէս սովորութիւն էր Պուրկի մէջ նոյն ժամանակ, այս ունկնդրութիւնը բազմաթիւ ազնուականներու ներկայութեան կատարուեցաւ: Երբ Ապետիք եւ ընկերը ետ ետ երթալով ու երկար խոնարհութիւն մը ընելով հեռացան դահլիճէն՝ իրենց իջեւանները վերադառնալու, իրենց համար կը սկսէր 1677-ի ամառը ի նորանոր դէպքերով:

Հրաւէր հրաւէրի վրայ կ'ընդունէին Վիեննաբնակ դիւանագէտներէն, որոնց մէջ առաջին տեղը կը բռնէր Պուրկի Պապական Նուիրակը, որ յետոյ վճռական դեր մը խաղացած էր Սուրբ Դաւիթի թիւնը կազմելու եւ համոզելու Լէոփոլտը որ պատերազմի ձեռնարկէ: Հրաւէր ստացան պալատականներէն՝ Կարոյոս Վալլեն-շթայնէ, որ ծերունի Մաքսիմիլիանոս Վալտշթայն կոմսին հետ տասնեակ տարիներ ծառայած էր կայսերական տան, եւ երկուքն ալ Լէոփոլտի մտերիմներն էին պատանեկութենէն սկսեալ: Ետոյ հրաւէր ընդունեցան Տիւրիշթայնի գոռոզ իշխանէն ալ:

Նմանապէս մեծ հետաքրքրութիւն արթնցաւ Վիեննայի բոլոր ակնառու ազնուականներու մէջ՝ օտար աշխարհներ տեսած եւ հետո երկիրներէ եկող այս երկու դեսպաններուն հանդէպ:

Լէոփոլտ Ա.ի խոստովանահայրը՝ Հ. Բրիտտափոր Շթէթինկըր իմաստուն Յիսուսեանը, ինչպէս նաեւ ազգային Մակալոթ կոմսն ալ սիրով կը հիւրընկալէին Ապետիքը: Ծերունի Փիւքսիոսը, որ վիեննական ամառուան տաքութեան պատճառով չէր կրնար դռնէլ ճամբորդութեան ընթացքին տկարացած առողջութիւնը, միշտ աւելի կը նսեմանար երիտասարդ եւ

կենսունակ Ապետիքին քով: Կարգը եկաւ նաեւ ներկայանալու կայսրին մօր՝ Էլէոնորայի առջեւն ալ, որ քաղաքական ամէն հարցով կը հետաքրքրուէր: Զեւակերպութիւններու կապուած ու կքելու աստիճան ակնազարդ պառաւը իր բնակութեան մէջ ընդունեցաւ Պարսկաստանէն եկողները, եւ իր թագաւոր որդիէն աւելի հետաքրքրութիւն ցոյց տուաւ իրենց առաքելութեան ու Պարսկական Արքունիքի անցողարձերու մասին: Այս առիթով Սին-ձենտորֆ կոմսը, կայսեր մօր ներքին վստահելի մարդն ալ, կրցաւ անձնապէս ծանօթանալ Ապետիքին հետ: Բայց ոչ միայն Էլէոնորա, այլ նոյնիսկ Լէոփոլտի կինը հրաւիրած էր Ապետիքը:

Փիւքսիոսի ծրագիրն էր, ինչպէս Շահնալ յանձնարարած էր, շարունակել ճամբան ու Պապին երթալ: Նախորդ ամառը ծերունի Կղեմէս Ժ.ի մահէն վերջ՝ Ին-նովիենտինոս ԺԱ. բարձրացած էր Ս. Պետրոսի դահլիճ վրայ:

Նոյն ատենները պատմական մեծ եղելութիւններ կը պատրաստուէին: Նախորդ տարին նոր վտանգ մըն ալ աւելցած էր եղածներուն վրայ. այն է՝ որ Թուրքերը յետ խաղաղութեան դաշինք կնքելու Լեհաստանի թագաւորին հետ Զուրաւնոյի մէջ, բոլոր ոյժերը միացուցած՝ իրենց հին ծրագիրը կ'ուղէին դործադրել եւ Վիեննայի պարխպներուն մօտենալ: Աւստրիոյ միակ փրկութիւնը եղաւ Ռուս Յարին անակնկալ զօրաւոր յարձակումը թուրքերու վրայ: Վիեննա կ'ապրէր թուրքերու մօտալուտ յուզումնալից սարսափին մէջ, եւ իր դիւանագիտութիւնը բոլոր կեդրոնացուցած էր կարելի եղածին չափ զօրացնելու իր բանակները՝ միացնելով դանոնք միւս վտանգուած պետութիւններու զօրքերուն հետ:

Փիւքսիոս անտանելի յօգացաւ պատմաւոր՝ անդործութեան դատապարտուե-

ցաւ, իսկ դէպքերը երթալով աւելի հարկադրիչ կը դառնային որ նա Հռոմ մեկնէր: Զուր տեղ կը ջանային համոզել զինքը իր բարեկամները՝ որ խնայէր իր անձին եւ Օգոստոսի այդ տաքերուն չյոգնեցընէր ինքզինքը աւելորդ տեղ: Ան վճռական կերպով պատասխանեց. «Երբ քրիստոնէութեան զոյութեան կեանքի եւ մահու հարցը կայ՝ կարելի չէ դանդաղիլ»:

Ապետիք սակայն նպատակ չունէր Փիւքսիոսին հետ Հռոմ երթալու: Դոմինիկեաններու վանքին մէջ դէպի պարտէզ բացուող պատուհանի մը առջեւ նստած՝ ողորդած արեւու շողերէն, կը դէպք անդադար, որովհետեւ Վիեննայի դրական շրջանակները խոստացած էին հրատարակել՝ եթէ դրի առնէր Պարսկաստանի մասին ունեցած իր ծանօթութիւնները: Այսպէս ահա, որքան որ ժամանակը կը ներէր, Ապետիք պատրաստեց Լէոփոլտ կայսր-թագաւորին նուիրուած «Cehil Sultan»-ը, որուն մէջ Հունգարացիներու մասին ալ այնքան շատ կը խօսուէր: Այս գրքին մէջ նա կը խօսի Պարսկաստանի մասին, բայց դժբախտաբար կը պակսին կարեւոր ծանօթութիւններ իր անձին եւ դործունէութեան շուրջ: Ապետիք կը կարծէր՝ թէ ասկէ վերջ Վիեննայի մէջ պիտի կարենար ամէնէն օգտակար կերպով ծառայել մինչեւ այսօր հետապնդած իր նշանակալի մահին: Բայց քրիստոնէութեան պատակին, այսինքն է՝ քրիստոնէութեան Լէոփոլտի ծառայութեան մէջ մտնել կաւրենալու համար: Ինքն ալ զերծ չէր անշուշտ մարդկային տկարութենէն, ու հրապուրուեցաւ նաեւ Հապսպուրկներու պետական պաշտօնէութեան փայլէն ալ: Արեւելի իսկ առաջին ունկնդրութեան ժամանակ Լէոփոլտին ներկայացուցած էր Վիեննայի մէջ իսկ ծանօթ Յակոբ Պատրիարքին յանձնարարական նամակը, որ կարեւոր դեր մը խաղաց Ապետիքի յաջորդական դործունէութեան վրայ: Այս նամակին

մէջ կը գրէր Պատրիարքը. «Պետրոս Ապետիք երկար ատեն ապրեցաւ մեզի հետ, տեսաւ եւ ճանչցաւ հոստեղի վիճակը, եւ անհատներու մէջ ալ շատ գովելի վարք մը ունեցած է. ան մեր բոլոր զաւանդները պիտի պարզէ Բու Վեհափառութեանը»: Այս նամակին արդիւնք պէտք է նրկատենք նաեւ այն հրաւէրը՝ որ Օգոստոսի մէջ հասաւ Ապետիքի բնակարանը, խընդրելով յայտնել իր կարծիքը «Արեւելեան լեզուներու համար կառուցուելիք ճեմարան»-ին ծրագրի մասին, որ ներկայացուած էր արքունիքին: Իր կարծիքը խընդրեցին՝ իբր մասնագէտ եւ հասկցող արեւելեան լեզուներու: Զինուորական Բարձրագոյն Պորհուրը կարծիք յայտնեց նոյն նիւթին շուրջ Օգոստոս 6-ին, եւ սահմանեց նոյն ամսոյն 8-ին, երկու օրուան յետագում տալով, հանդիսաւոր դոմարում մը՝ որու ժամանակ Պետրոս Ապետիք իբր մասնագէտ իր կարծիքը պիտի տար բազմաթիւ ունկնդիրներու ներկայութեան: Ապետիք իր առաջին բանախօսութիւնը կատարեց Դոմինիկեան «Sancta Maria Rotunda» կոչուած վանքին մէջ. այս առիթով այնպիսիներ ալ որոնք մինչեւ այն ատեն իրեն հետ չէին ծանօթացած, կրցան ճանչնալ իր խոր հմտութիւնը: Ունկնդիր մեծամեծներու եւ բարձրաստիճան եկեղեցականներու մէջ կային նաեւ բազմաթիւ հունգարացիներ ալ:

Անկէ վերջ ամէն բան հարթուեցաւ Ապետիքի առջեւ: Կայսր-թագաւորը երկրորդ ունկնդրութեան մը կանչեց զինքը, ու ինչպէս նախորդ անգամներն ալ՝ Կոմս Ռայմոնտ Մոնթէքուրլին յանձնուեցաւ՝ որպէսզի դործերու մասին միասին խորհրդակցին: Մոնթէքուրլին սրտին մէջ մեծ համակրութիւն մը ծնաւ մեծղի ծրագիրներով զբաղող այս Պարսկահայուն հանդէպ, ու վերջն ալ միշտ անոր ջերմ պաշտպաններէն մէկը հանդիսացաւ:

Կայսերական երկրորդ ունկնդրութենէն

